

# Դիլիջան քաղաքի ջրամատակարարման համակարգի վերականգնում



**Երկիր.** Հայաստանի Հանրապետություն  
**Մարզ, քաղաք** Տավուշի մարզ, ք. Դիլիջան  
**Պատվիրատու** Ջրային տնտեսության զարգացման և բարեփոխումների ԾԻԳ ՊՀ, «Հայջրնուդկոյուղի» ՓԲԸ  
**Ժամկետները.** Մարտ – Մեպտեմբեր, 2005թ.

## Ծառայության մոտավոր գինը

69300 ԱՄՆ դոլար

## Տեխնիկական առաջադրանք


- Նախնական նախագծի մշակում (I փուլ)
  - բաշխիչ ցանցի հիդրավիկական մոդելավորում և գոտիավորում
  - կապիտալ ներդրումների գնահատում, գոտիների դասակարգում ըստ առաջնահերթության
- Աշխատանքային նախագծի մշակում (II փուլ)
  - աշխատանքային գծագրերի մշակումներ
  - ըստ շինարարական փաթեթների աշխատանքային ծավալների և կոնֆիդենցիալ նախահաշիվների կազմում



## Ծրագրի և կատարված ծառայության համառոտ նկարագիրը.

Աշխատանքային նախագծով մշակվել են շինարարական 4 փաթեթներ, որոնցով ընդհանուր առմամբ նախագծվել են՝

- երկու ջրի մաքրման կայանների գլխավոր մասնաշենքերի վերանորոգման աշխատանքներ:
- «Գոլովինո» ՋՄԿ-ի ուղղաձիգ 4 պարզարանների և արագ գործողության 8 ֆիլտրերի տեխնոլոգիական խողովակների, դրենաժային համակարգի և փականային հանգույցների վերակառուցում, 500մ<sup>3</sup> տարողությամբ նոր ՕԿՋ-ի, պոմպակայանի, նոր քլորակայանի և ռեագենտ տնտեսության նախագծում:
- «Ֆրոլով» ՋՄԿ-ի կախված նստվածքով 4 պարզարանների և արագ գործողության 5 ֆիլտրերի տեխնոլոգիական խողովակների, դրենաժային համակարգի և փականային հանգույցների, 200մ<sup>3</sup> և 100մ<sup>3</sup> տարողությամբ ջրամբարների, պոմպակայանի, նոր քլորակայանի և ռեագենտ տնտեսության նախագծում:
- 2 ՋՄԿ-ների գլխավոր մասնաշենքերի և օժանդակ կառուցվածքների օդափոխության և ջեռուցման, գազամատակարարման ու էլեկտրամատակարարման նախագծերի մշակում:
- Ջրամատակարարման բաշխիչ ցանցի գոտիավորման նպատակով 19.0կմ ընդհանուր երկարությամբ 50մմ-ից մինչև 300մմ տրամագծի պոլիէթիլենե և պողպատե խողովակներից ջրագծերի նախագծում:
- 83 բազմաբնակարան շենքերի բակային ջրագծերի նախագծում:
- 1300 մասնավոր տների վթարային վիճակում գտնվող մուտքագծերի փոխարինման տիպարային լուծումների և աշխատանքային ծավալների մշակում, 19.5կմ ընդհանուր երկարությամբ 20մմ-ից մինչև 40մմ տրամագծի պոլիէթիլենե խողովակների նախատեսումը:



- Բաշխիչ ցանցում նախագծվել են ընդհանուր թվով 85 տեխնոլոգիական փականային հանգույցներ, այդ թվում 7 ճնշման կարգավորիչ փականային հանգույցներ:
- Մշակվել են 1000մ<sup>3</sup> տարողությամբ և 2x500մ<sup>3</sup> տարողությամբ ՕԿՋ-ների վերականգնման աշխատանքային նախագծեր:
- Մշակվել են բաշխիչ ցանցում վերգետնյա տեղադրման հակափրկեհային հիդրանտներ՝ թաղված տեղադրման փականներով:

## Աշխատանքի նպատակն է

Բարելավել Դիլիջան քաղաքի ջրամատակարարումը, բարձրացնելով ինչպես մատակարարվող ջրի որակական ցուցանիշները, այնպես էլ քաղաքային բաշխիչ ցանցի տեխնիկական վիճակը

